ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

20 հունվարի 2021թ. թիվ 40

Ա. ԴԵՄԻՐՉՅԱՆԻՆ ԵՎ Ս. ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ԴԻԼԻՋԱՆ
ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունվարի 20-ի թիվ № 3/27.2/261 գրությունը և գործուղման առաջադրանքը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանին և նույն բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանին ս/թ հունվարի 21-ից 22-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Դիլիջանում կայանալիք «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կազմակերպվելիք «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 7-րդ ազգային զեկույցի ավարտական սեմինարին:

2. Գործուղման հետ կապված ծախսերը վճարում է հրավիրող կողմը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

1/20/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. հունվարի 20
ք.Վանաձոր